Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Ա/Կ ՊՐՈՖԽՈՐՀՈՒՐԴ

# ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԱՐ-ՎԱԾԱՅԻՆՆԵՐԻ I ՀԱՎԱ-ՔԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

(1 – 6 ՄԱՅԻՍԻ 1931Թ. ԲԱՔՈՒ)

19 ԹԻՖԼԻՍ / ՇՐՈՄԱ 31

330.391
Ա. 57
15 JAN 2010
05 FEB 2007
330.391
966

Ա/Կ ՊՐՈՖԽՈՐՀՈՒՐԴ

# ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԱՐՎԱԾԱՅԻՆՆԵՐԻ I ՀԱՎԱՔԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

(1 – 6 ՄԱՅԻՍԻ 1931Թ. ԲԱԳՎԻ)

19 ԹԻՖԼԻՍ / ԾՐՈՄԱ 31

13.02.2013

22.214

Թիֆլիս, տպարան լրագրների հրատարակչության «Կոլլեկտիվ»

Գլավլիտ № 1103. Տիրաժ 1000.

Պատվեր № 1782.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՎԷ 839-63

# ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԱՐՎԱԾԱՅԻՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՎԱՔԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ ԸՍՏ ԸՆԿ. ԿՈՒԲՈՒԼՈՎԻ ԶԵԿՈՒՅՄԱՆ.

Լսելով և քննության առնելով Անդրկ. ԺՏԳԽ-ի զեկուցումը 1931 թ. I կվարտ. ԱՍՖԽՀ-ի արդյունաբերական արդֆինպլանի կատարման հետևանքների մասին Ա/կ հարվածայինների 1 հավաքը արձանագրում է.

1. ԱՍՖԽՀ արդյունաբերությունը մտնելով 1931 թվականը ունեցել է խոշոր նվաճումներ սոցիալիստական կառուցման գործում հնգամյակի I/2 տարվա ընթացքում, վորը ապահովում է հնգամյակի յերրորդ վճռական տարվա պլանային խնդիրների կատարումը բարձրագույն տեմպով։

Չը նայելով արդյունաբերության աշխատանքներում անցյալ տարվա համեմատությամբ այս տարվա I կվարտալում ունեցված բացարձակ աջողություններին (արդպրոդուկցիայի աճը 31 թ. I կվ. 30 թ. I կվ. համեմատութ. հասնում է 34,9$^{0}/_{0}$, իսկ առանց մարգանեցի 48$^{0}/_{0}$, աշխատանքի արտադրությունը 30 թ. I կվ. համեմատ. բարձրացել է 16,6$^{0}/_{0}$), այնուամենայնիվ այդ աջողությունները չեն կարող համարվել բավարար առաջին կվարտալում պլանային խնդիրների կատարման հետ մնալու հետևանքով և, բացի դրանից այն պատճառով ևս, վոր արդյունաբերությունը ս. թ. I կվարտ. չը կարողացավ պահպանել արտադրության

աճման բարձրագույն տեմպը, վորը տեղի ուներ 30 թ. հատուկ կվարտալում (կվ. պլանը կատարված է 81,8$^0/_0$, աշխատանքի արտադրությունը 16,6$^0/_0$, միջին թվով տարեկ. 29,6$^0/_0$-ի դիմաց, 31 թ. I կվ. վալով. պրոդուկցիան հատուկ կվ. համեմատութ. իջնում է 4,8$^0/_0$):

2. ԺՏԳԽ արդյունաբերական աշխատանքն ս. թ. I կվ. բնորոշվում է նաև բանվորության թվական հետագա աճումով, վորը կազմում է 11,7 հազար հոգի (անց. տարվա համեմատ. 50$^0/_0$ ավելի), մի շարք արդյունաբերությունների և հիմնարկների գոյությամբ (առավելապես «բ» գրուպպայից) պլանային խնդիրների բարձրացումով (Արտիկ տուֆ—20,7$^0/_0$, Լենինականի տեքստիլ. 22,7$^0/_0$, և այլ). իսկ մի շարք ուրիշ տեսակի հիմնարկների գծով (Տղվիբուլիի հանքեր, անդեզիտ, կուրսեր, գրանիտ, հայպեմզ ու մի շարք ուրիշ հիմնարկներ և արդյունաբեր. ձեռնարկներ գլխավորապես «ա» գրուպպայից)—բանվոր ույժերի ուժեղ դեֆիցիտայնություն:

3. Բանվոր ույժերի պակասը և արդյունաբերության թույլ ապահովումը մասնավորապես «ա» գրուպպայի բանվորներով առանձին հիմնարկներում «վ» գրուպայի ոգտագործումով ունեցել է այն հետևանքը, վոր թույլացել է խոշոր թվի ձեռնարկների անընդհականի անցնելու գործը, վորը իր հերթին չեր կարող չանդրադառնալ արտադրության ծավալման ընդհանուր տեմպերի վրա, վորը և ունեցավ իր բացասական ազդեցությունը արդյունաբերության պրոդուկցիայի լայնացման գործի վրա (Ա/կ ԺՏԳԽ արդյունաբերություններում հերթափոխությունով աշխատողների կոեֆֆիցենտը 31 թ. փետրվարին կազմում եր 1,38$^0/_0$ «ա» գրուպպայով—1,27$^0/_0$, «բ»-ով 1,40$^0/_0$. անընդհա-



տական աշխատանքի անցել է բանվորության 61$^0/_0$ այս հաշվում «ա» գրուպայով 58$^0/_0$, «բ»-ով 64$^0/_0$):

4. Հարվածայինների I հավաքը առանձնապես դարձնում է ԱՍՖԽՀ-ի տնտեսական որգանների և պրոֆմիությունների ուշադրությունը I կվ. արդյունաբերության ցուցանիշ. աշխատանքների թերակատարության վրա մասնավորապես ինքնարժեք չափի վերաբերյալ (հաշվի առնված հիմնարկները ինքնարժեքը իջեցնելու փոխարեն բարձրացրել են 1,8$^0/_0$ «ա» գրուպպայի գծով 4,8$^0/_0$, «բ»-ով 1,7$^0/_0$):

Միաժամանակ պրոդուկցիայի աճի պլանային թերակատարման հետևանքով արդյունաբերության մեջ աշխատող բանվոր ույժերի գոյությամբ աշխատանքի արտադրության բարձրացման պլանում ևս տեղի ունի թերակատարում. բացի դրանից մի շարք հիմնարկներում տեղի ունի աշխատավարձի և աշխատանքի արտադրության աճման դիս պրոպորցիա (անչափակցություն). կաշվե արդյունաբերությունն որինակ տվել է աշխատավարձի աճի 5,5$^0/_0$ աշխատանքի արտադրության 24$^0/_0$ ընկնելու գոյությամբ, քիմիական արդյունաբերությունը 12$^0/_0$, 8$^0/_0$ և այլն:

5. 1931 թ. I կվ. արդյունաբերության հիմնական կառուցման պլանը չի կատարված, վորը արդյունաբերության տարեկան պլանի կատարման գործում ըստեղծում է լուծարք առաջ գալու սպառնալիք:

Ա/կ հարվածայինների հավաքույթը ընդգծում է, վոր ս. թ. I կվ. արդյունաբերության հիմնական կառուցման համար պլանով նախատեսված 11,8 միլ. ռուբ. գումարից փաստորեն տրված է 9 միլ. ռուբ. միայն կամ 76$^0/_0$-ը:

Ա/կ ԺՏԳԽ ս. թ. I կ. ունեցած անբավարար աշխատանքը (արտադր. ծրագրերի չը կատարում ամբողջովին և խոշոր ճեղքվածքներ առաջ գալու փաստը ինչպես առանձին հիմնարկներում նույնպես և արդյունաբերության մեջ) վորոշ չափով հետևանք է այն բանի, վոր գործի գլուխ անցած տնտես. որգանները և հիմնարկներ. ադմինիստրացիան չեն կարողացել ձևակերպել ու սիստեմի յենթարկել իրենց տնտեսական նախաձեռնությունը տրեստներում և հիմնարկներում ու 1931 թ. I կվարտ. արտադր. ծրագիրը կատարելու համար չեն կարողացել գործի անցնել անհրաժեշտ տեմպերով:

Վերը հիշած հիմնական ֆակտորների հետ միասին վորոնք հանդիսանում են I կվ. պլանը չը կատարելու պատճառներ, Ա/կ հարվածայինների հավաքույթը կանգ է առնում ուրիշ վոչ պակաս լուրջ պատճառների վրա ևս, վորոնք նույնպես արգելք են հանդիսացել արտադրական պլանների աջող կերպով կատարելու գործին. այդ պատճառներն են. պլանային խնդիրները չեն տարվել ցեխերը, չեն մոտեցվել բրիգադաներին և առանձին դազգյահներին: Անբավարար, վորոշ տեղերում նաև հիմնարկների աշխատանքների վրա ունեցած տեխնիքական թույլ ղեկավարությունը հում նյութեր մատակարարելու գործում, աշխատող ույժերի, վառելիքի և այլ նյութեր հասցնելու գործում յեղած ընդհատումներ և այլն: Պրոֆեսիոնալ և տնտեսական որգանները չեն կարողացել օգտագործել բանվոր մասսաների աքտիվությունն ու ենտուզիազմը և ուրիշ ընթացք տալ պլանային խնդիրների կատարման և գերակատարման գործին. Թույլ է յեղել աշխատանքի դիսցիպլինայի պաշտպանության համար, բանվորության անմշտակա-



նության, կազմակերպչական անճշտությունների դեմ մղվող պայքարի ղեկավարությունը, բանվորության կողմից յեղած օգտակար առաջարկները և գյուտերը չեն արժանացել ադմինիստրացիայի ուշադրությանը և չեն կատարվել ժամանակին և այլն: II կվարտալի արդյունաբերական պլանային խնդիրների բարձրագույն տեմպերով ու աջող կերպով կատարելու գործն ապահովելու, այլ և I կվարտ. տեղի ունեցած ճեղքվածքը լրացնելու մտքով հարվածայինների ժողովը անհրաժեշտ է համարում հետևյալը—

1. Ա/կ ԺՏԳԽ և բոլոր տնտես. ղեկավար որգանները պետք է հարթեն, ձևակերպեն արդյունաբեր. հիմնարկների II կվ. արդֆինպլանն այն հաշվով, վոր II կվ. ծածկվի I կվարտ. ծրագրում տեղի ունեցած բացը, առանձնապես պլանի վորակ. ցուցադրական մասը, վորը չի կատարված սիստեմատիկորեն և այդպիսով ստեղծել հնարավոր պայմաններ, վորը ապահով եր տարեկան պլանի խնդիրների կատարումը և գերակատարումը:

2. Տնտեսակ. ղեկավար որգանները (ԺՏԳԽ, տրեստները) պետք է ստուգեն, թե ինչ չափով են կատարված դիրեկտիվները պլանային խնդիրները բանվորական դազգյահներին հասցնելու վերաբերյալ. յենթարկել պատասխանատվության այն անձանց և որգաններին, վորոնք մինչև այսոր չեն կատարել տրված դիրեկտիվները, այլ և ձեռք առնել շտապ միջոցներ, վոր ապահովեցնեին պլանային խնդիրները ցեխերը, բրիգադաներին և դազգյահներին հասցնելու գործը:

3. Պրոֆ. և տնտես. մարմիններն իրենց աշխատանքի կենտրոնում պետք է դնեն արդֆինպլանի անպայմանորեն կատարելու խնդիրը: Պրոֆ. և տնտես.

մարմինների վորակային գնահատականը պետք է պարզվի այդ հիմնական խնդիրները լուծելու աստիճանով: Պրոֆ. և տնտես. մարմինները պետք է մոբիլիզացիայի յենթարկեն բանվոր. մասսայի ուշադրությունը դեպի II կվարտալի պլանային խնդիրները, բարձրացնեն բանվորների աշխատանքային ենտուզիազմն ու ակտիվությունը ապահովելով II կվարտ. արդֆինպլանի անպայմանորեն կատարելու և գերակատարելու գործը սոցմրցակցության և հարվածայնության բարձր տեմպերի հասցնելու միջոցով վորպեսզի բանվորական լայն մասսան ակտիվ մասնակցություն ունենա III կվարտալի արդֆինպլանի մշակման գործում:

4. Ա/կ ԺՏԳԽ պետք է հատուկ ուշադրություն դարձնեն այն բանի վրա, վոր նրա տրեստներն ու բաժանմունքները ընդունեն և իրագործեն բանվորների բոլոր հնարումներն ու առաջարկները, վոր արել են նըրանք գործը ռացիոնալիզացիայի յենթարկելու մըտքով, բայց չեն ոգտագործված I կվարտալի ընթացքում և II սկզբում:

5. Ա/կ ԺՏԳԽ և Հանրապետութ. ԺՏԳԽ, տրեստները և կառուցող որգանները պետք է ժամանակին ապահովեն այն հիմնական աշխատանքների ծավալումը, վոր մտնելու յեն II կվարտալ. հիմնական աշխատանքների տեմպերը ֆորսիրովկայի յենթարկել այն իմաստով, վոր անպայմանորեն և ժամանակին աշխատանքի անցնեն այն նոր կառուցվող հիմնարկները, վորոնց պրոդուկցիան արդեն հաշվի յե առնված 1931 թ. արդյունաբերական տարեկան պլանները մշակելու ժամանակ:



6. Պրոֆկազմակերպությունները պետք է ցեխերի, բրիգադաների և դազգյահների տնտեսական հաշվի վերածելու, հիմնարկների, հարվածային բրիգադաների և առանձին հարվածայինների կողմից կընքված տնտեսական պայմանագրերի և կրեդիտային ռեֆորմի նշանակությունն ու նպատակը պարզելու մըտքով բանվորական լայն մասսաների մեջ ծավալեն բացատրական աշխատանքը՝ ապահովելով բանվոր հասարակության կողմից անհրաժեշտ ոգնություն հասցնելու գործը տնտեսական որգանների վերը հիշված լուրջ միջոցառումներն իրագործելու իմաստով:

7. Պրոֆ. և տնտես. կազմակերպությունները այնտեղ, վորտեղ դեռ չի վերջացած, վերջացնել մշակման գնահատման նորմաների վերաքննումի կամպանիան նոր գներ նշանակելու ընթացքում ղեկավարվելով այն նորմաններով, վոր կողմերն ընդունել են հավաքական պայմանագրերով:

8. Պրոֆկազմակերպութ. հատուկ ուշադրություն պետք է դարձնեն և պայքարելու զորեղ միջոցներ ձեռք առնեն պրոգուլչիկների, ծույլերի, աշխատանքի որենքը խախտողների, վնասարարների և «թռչողների» դեմ յենթարկելով նրանց բանվորական լայն հասարակությանը և ոգտագործելով բոլոր կրթական-քաղաքական միջոցները դեզորգանիզատորներին ուղղելու մտքով:

9. Պրոֆ. և տնտես. որգանները պետք է գլխավորեն բանվ. մասսաների ստեղծագործ. ինցիատիվներին, վոր արված են ձեռնարկների և գործարան-հիմնարկների մեջ գոյություն ունեցող պակասները վերացնելու, վառելա և հում նյութերի տնտեսորեն գործադրելու ու ծախսելու գծով և այլն:

10. Տնտեսական կազմակերպությունները պետք է ձեռք առնեն կոնկրետ միջոցներ այն մասին, որ ամենակարճ ժամանակում ձեռնարկներում հիմնվեն հաշվառներ բանվորական ռացիոնալ առաջարկների, սոցմրցակցության և հարվածայնության էֆեկտավոր հետևանքները հաշվի առնելու իմաստով. այլ և կազմակերպել բանվորների կողմից սիստեմատիկորեն արվող ինֆորմացիաներ ձեռնարկների, ցեխերի և բրիգադների աշխատանքների վերաբերյալ՝ ադմինիստրացիայի կողմից յուրաքանչյուր 10 օրը միանգամ արտադրական խորհրդում, ցեխային, խմբակց. և բանվոր-հարվածայինների ժողովներում արած զեկուցումների միջոցով։

11. Պրոֆկազմակերպությունները պետք է ստուգեն հիմնարկներում գոյություն ունեցող բանվոր ձեռքի պակասության և այդ պակասը ծածկելու մոքով ուժեր պատրաստելու պլանների գոյության փաստը, դարձնելով առանձին ուշադրություն ցեխերում աշխատող բանվոր ույժեր պատրաստելու վրա և կանացի ույժեր ներգրավելու ոչ միայն մասսայական պրոֆեսիաներ, այլ և բարձր որակավոր աշխատանքի և այլն, ձեռք առնել անհրաժեշտ միջոցներ ևս գործարգպրոցների ցանցի հետագա ծավալման և բանվոր ույժեր պատրաստելու այլ տեսակների վրա։

12. Պրոֆմիությունները և տնտ. օրգանները ուշադրություն պետք է դարձնեն բանվորական բնակարանների և կրթա-կենցաղային շինարարության վրա, այլ և միջոցառումների վրա, աշխատանքի պաշտպանության պայմանների առողջացման գծով (անվտանգավոր տեխնիկա, արդ. սանիտարիա), իր ժամանակին օգտագործելով պլանով այդ նպատակով հատկացված միջոց-



ները՝ առաջին հերթին արդյունաբերական բնավորության հիմնարկությունների նկատառումով (նավթ., քարածխ. և հանքային)։

13. Կոոպերատիվ և մթերող կազմակերպությունները պրոֆմիությունների և տնտես. օրգանների հետ միասին ձեռք պետք է առնեն վճռական միջոցներ կուս. կենտկոմի և կենտ. վերահ. կ. դեկտ. պլենումի որոշումներն իրագործելու գործն ապահովելու գծով, մթերման գործի վերակառուցման վերաբերյալ. մասնավորապես պրոֆկազմակերպությունները պետք է ուժեղացնեն իրենց կազմակերպչական աշխատանքը կոոպերացիայի բոլոր օղակներում լայնորեն գործադրելով այն իրեն արդարացնող մեթոդները, վորոնք առաջին հերթին դեֆից. և արդ. մթերքներով ապահովեցնեյին հարվածայիններին. կարճ ժամանակում իրագործել հասարակական մթերման գործի վճռական լավացումը (տաք կերակուրների վորակի բարձրացում և գների իջեցում), լայնացնել փակ բաշխիչների թիվը և այլն։

14. Ժողովը անհրաժեշտ է համարում լայն կերպով գործադրել լավագույն հարվածայիններին և հարվածային բրիգադներին պարգևատրելու պրակտիկան նրանց, վորոնք ցույց են տվել աշխատանքի հերոսության և վորակական ու քանակական ցուցանիշ պլանի գերակատարման օրինակներ, միաժամանակ ծանոթացնել բանվորական լայն մասսաներին լավագույն հարվածայինների և հարվածային բրիգադների ունեցած աջողությունների հետ օգտագործելով այդ նպատակի համար ընդհանուր, ցեխային ժողովները, կենտրոնական ու գործարան. մամուլը և այլն։

15. Ա/կ հարվածայինների I ժողովը կոչ է անում Անդրկովկասի Ֆեդերացիայի բոլոր հարվածայիններին

և բանվորներին աշխատանքի սոցիալիստական ձևերի հետագա ծավալման-սոցմրցում և հարվածայնութ.—և դրանց ավելի բարձր աստիճանների վրա դնելու հիման վրա վերացնել յերևան հանված ճեղքվածները, միանալ սոցիալիստական կառուցման ռազմական տեմպերին, վոր առաջ է տարվում կոմկուսակցության ղեկավարությամբ ու նրանց հիման վրա ապահովել հընգամյակի յերրորդ վճռական տարվա պլանային խընդիրների կատարումը և այդպիսով աջակցել հիմք գցելու ԱՍՖԽՀ սոցիալիստական եկոնոմիկայի աջող լրացմանը և հնգամյակի չորս տարում իսկ վորոշ տեղերում էլ ավելի կարճ ժամանակում կատարելու լոզունգի իրականացմանը։



## ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԱՐՎԱԾԱՅԻՆՆԵՐԻ I ՀԱՎԱՔԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ Ա/Կ ՍՈՑՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀԱՐՎԱԾԱՅՆՈՒԹՅԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՊՐՈՖՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՐԱՆՑ ՎՐԱ ՈՒՆԵՑԱԾ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԿ. ՍՈՍՅԱՆԻ ԱՐԱԾ ԶԵԿՈՒՅՄԱՆ ՇՈՒՐՋԸ:

Ա/կ հարվածայինների I ժողովը նշում է, վոր անցյալ 2 տարվա ընթացքում սոցմրցակցության և հարվածայնության լայն ծավալման գործում ունեցել է նշանավոր աջողություն, կազմակերպված է բանվորական լայն մասսայի ստեղծագործական ակտիվություն և ենտուզիազմ ուղղված հնգամյակի առաջին 2 տարվա պլանային խնդիրների աջող կերպով կատարելուն և գերակատարելուն։

Սոցմրցակցությունը և հարվածայնությունը դարձել է արդյունաբերական հիմնարկություններում աշխատանքի կազմակերպության հիմնական ֆորման և աստիճանաբար անցնում է գյուղատնտեսության սոցիալիստական սեկտորին։

Կոմկուսակցության ղեկավարությամբ և նրա Լենինյան գեներալային գծի պաշտպանության հիման վրա հակառակ աջ և «ձախ» ոպորտունիստական մարգարեության «մասսաների ակտիվությունն ընկած» լինելու վերաբերյալ մենք ունենք մրցակցողների և հարվածայինների ահագին կազմ վորը կամքի յերկա-

թյա ամբողջությունով հնգամյակի ժողովրդական տնտեսության պլանը գերակատարում է 4 տարում, իսկ արդյունաբերության վորոշ ճյուղերում 3 և $2^1/_2$ տարում, կուսակցության գլխավորության կողմից ծավալված սոցմրցակցությունն ու հարվածայնությունը դարձել է սոցիալիստական կառուցման համար շտապ տեմպով պայքարող բանվոր դասակարգի դրոշակը։

Դրա հետ միասին հարվածայինների ժողովը ընդգծում է գոյություն ունեցող մի շարք պակասություններ.—սոցմրցակցության և հարվածայնության թույլ ղեկավարություն, աշխատանքի ձևի ոպորտունիստական թերագնահատում վորոշ պրոֆ. և տնտես. կազմակերպությունների կողմից և սոցմրցակցության ու հարվածայնության վորոշ օղակներում աղավաղումների փաստեր։

Այն ժամանակ, յերբ վորոշ գործարաններում բանվորության 85—100% մտնում է սոցմրցակցության և հարվածայնության ցանցը, կան մի շարք ուրիշ ձեռնարկներ, ուր շատ քիչ թվով բանվոր են մտած այդ կազմի մեջ (Ազնավթ, Բաթումի նավթ մղող գավառ, Բագուի Վոլոդարսկ. անկարի գործարանը, Շամլուղի պղնձահանքը, Մանեսի գավոդը, պետական П ծխախոտագործարանը Թիֆլիսում և այլ), վոր հետևանք է պրոֆկազմակերպությունների այդ տեղերում ունեցած թույլ աշխատանքների։

Մի շարք հիմնարկներում գոյություն ունեցող լուրջ ճեղքերը (մետաղի արդյունաբերութ., տրանսպորտային, կաշվի, գյուղարդյուն. և այլն), I կվարտ. քանակական և վորակական ցուցանիշ արդֆինպլանի կատարման գործում հարվածային և սոցմրցակցող բանվորության մեծ քանակի գոյությամբ պետք է



բացատրել այն բանով, վոր այդ հիմնարկներում թույլ կերպով է կազմակերպված հարվածային և սոցմրցակցության գործը։

Յելնելով կուսակց. ա/կ ԿՎՀ վորոշումներից, այլ և ՀԱԿՄԽ և յերիտմիության ԿԿ դիմումների հիման վրա հարվածայինների I ժողովը «догнать и перегнать, передовые капит. страны» լոզունգի շտապ կերպով կատարելու նպատակով և հիմնարկներում նկատվող ճեղքերը անհապաղորեն վերացնելու մաքով և արդֆինպլանի վորակական և քանակականորեն կատարման ու գերակատարման նպատակով կոչ է անում ա/կ բանվորներին, հարվածայիններին, ինժեներներ և տեխնիկներին և պարտավորեցնում է պրոֆ. և տնտես. կազմակերպություններին—

1. Հազարավոր և տասնյակ հազարավոր հարվածային բանվորներ ներգրավելով լայնորեն ծավալել սոցմրցակցությունը բրիգադաների առանձին բանվորների միջև լավագույն վորակի աշխատանքով իրենց խնդիրների գերակատարման նպատակով։

2. Շարունակել հարվածայիններին տեխնիքական ընդհանուր գիտություն տալու գործի ծավալումը կազմակերպելով սոցմրցակցությունը բանվորների, բրիգադաների և ցեխերի միջև լավագույն կերպով յուրացնելու խորհրդային և օտար տեխնիկան, սեփական գաղգյահի ուսումնասիրությունով աջող կերպով օգտագործելու համար։ Լրիվ կերպով օգտագործել Լենինգրադի փորձը ուսման փոխառությունն անցկացնելու մաքով։

3. Ապահովել բոլոր հիմնարկությունները ել վերածել տնտեսական հաշվետվության ամեն մի բրիգադի և բանվորի մտցնելով արտադրական կոնկրետ խըն-

գիրներ քանակական և առանձնապես որակական ցուցանիշներով լայնորեն տարածելով Լենինի անվան բալտիկ սև կաբել և այլ առաջավոր հարվածայինների ինիցիատիվան, որ իրագործում է բրիգադների տնտեսահաշվի անցնելու գործը և ապահովում մասսայահաշվառի և կոնտրոլի կազմակերպումը։

4. Կռիվ մղելով տեխնիքական ուղիղ նորմիրովկա կազմակերպելու, աշխատանքի լավագույն ձևի տարածման համար, գլխավորելով հարվածայինների շարժմանը հանդիպական բարձրացված նորմայի մշակման գործում, կարճ ժամանակում լրացնել առաջավոր հարվածայինների ինիցիատիվով սկսածը նորմաների վերաքննումի և գների նշանակման գծով, ապահովելով լավագույն բանվորներին առանձնապես լավագույն հարվածայիններին, սոցիալիստական առաջավոր մրցողներին լավագույն աշխատավարձի պահպանումով։

5. Ա/կ պրոֆկազմակերպությունները իրենց սիստեմատիկ ղեկավարությունով հարվածայինների և սոցմրցողության շարժման պետք է հասցնեն ամենաբարձր աստիճանին, ապահովեցնել սոցմրցման գործում իրենց կոնկրետ ղեկավարությունը հարմարեցրած արտադրությունների առանձին ճյուղերի ինքնահատուկ պայմաններին, առանձին բանվորներին տեղերին և գրուպաներին։ Լուրջ ուշադրություն դարձնել սոցիալիստական աշխատանքի բարձրագույն ձևի կիրառելուն (ցեխային, բրիգադային, հերթափոխության և հանդիպական պլաններ, օրինակելի պրոդուկցիայի բրիգադաներ, կոնտրոլային պոստեր, հասարակական բուքսիր, սոցիալիստական արտադրական փորձառության փոխ ոգնություն և այլն)։



4283-63

6. Լուրջ նշանակություն տալով բանվորության մասսայական գյուտարարության հետագա զարգացման գործին, ժողմխ առաջարկում է պրոֆմիություններին ուժեղացնել աշխատանքը գյուտարարների ընկերության ստորին օղակներում։ Կազմակերպել գյուտարարների փորձառությունների փոխանակություն։ Վերակառուցել «բրիզ»-ների աշխատանքը մոտեցնելով նրանց աշխատանքը ձեռնարկ-հիմնարկներին և գյուտարարների ընկերության ստորին օղակներին։ Սիստեմի յենթարկել և կանոնավորել գյուտարարների կոնսուլտացիայի գործը, կազմակերպել փորձնական լաբորատորիա, արհեստանոց և այլն։ Ավարտել գյուտարարների ընկերության հանրապետությունների բյուրոների ձևավորումը։ Պրոֆմիությունները պետք է արթուն հսկողություն ունենան բանվորական գյուտերի, նրանց ռեալիզացիայի ընթացքի վրա պատասխանատվության յենթարկելով հանցավորներին բանվորական գյուտարարության վերաբերյալ գոյություն ունեցող դիրեքտիվները խախտելու համար։

7. Նկատի առնելով այն, որ հարվածայնությունը և սոցմրցակցությունը թույլ է տարածված գյուղերում, լեռնային բանվորների, կենդանաբուծական, մեքենա-տրակտոր. կայանների, բատրակների և մյուս բոլոր պրոֆմիությունները և շեֆային կազմակերպությունները պետք է մշակեն կոնկրետ միջոցառումներ գյուղերում սոցմրցակցության և հարվածայնության ծավալման իմաստով փոխադրելով սոցիալիստական աշխատանքի ձևի կազմակերպման փորձը այնտեղ։

Ա/կ պրոֆխորհրդին հանձնարարվում է հսկողություն ունենալ այս դիրեկտիվի իրագործման վրա։



ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀԽՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна

Ա/Կ կոլխոզային կենտրոնը և գյուղխոզկոոպերացիան պետք կտրուկ փոփոխություն առաջ բերեն սոցիալիստական աշխատանքի ձևի ծավալման գործում կոլխոզ-կոոպերացիայի սիստեմում:

8. Ա/Կ պրոֆխորհուրդը և հանրապետական պրոֆխորհուրդները մի ամսվա ընթացքում պետք է ստուգեն և պարզեն պարգևատվության ֆոնդի դրությունը, պարտավորեցնելով պրոֆկազմակերպություններին սիստեմատիկ կերպով ստուգման ենթարկել ֆոնդերի կանոնավոր կերպով օգտագործվելու իմաստով պատասխանատվության ենթարկելով ղեկավար օրգանների դիրեկտիվները խախտելու համար մեղավոր ճանաչվածներին, աշխատելով լիովին իրագործել Կուս. ԿԿ-ի վորոշումները բանվորական գյուտարարության և առաջարկների վերաբերյալ:

Ա/Կ պրոֆխորհուրդը Զակտորգի հետ միասին 10 օրվա ընթացքում պետք է ստուգեն հարվածայինների համար գոյություն ունեցող ապրանքի ֆոնդի դրությունը և նրա բաժանվելու կանոնավորությունը:

9. Հայտնաբերելով մի շարք տնտեսական հիմնարկների անթույլատրելի պասսիվ վերաբերմունքը սոցմրցակցության և հարվածայնության հաշվառման և ամրացման գործում (պլանային խնդիրների ցեխերը և ղազգյահներին չը հասցնելը, հաշվառքի բացակայությունը արտադրական եֆեկտության մեջ). տնտեսական հիմնարկների ղեկավարները կարճ ժամանակում պետք է կանոնավորեն հարվածայնության և սոցմրցակցության վորակական ու քանակական հաշվառումը նշանակելով հատուկ անձ 10 օրվա ընթացքում, վոր պատասխանատու լինի հաշվառման ժամանակի և ճշտության համար: Առանձին ուշադրություն դարձնել



հարվածայնության և սոցմրցակցության արտադրական հաշվառման եֆեկտավորության վրա:

Պրոֆկազմակերպությունները պետք է ապահովեցնեն կուսակց. կենտկոմի 30 թ. ապրիլի 28-ի դիրեկտիվների կատարումը (հարվածայինների Լենինյան հավաքի վորոշումները) պարտավորությունների և կատարելու ժամանակամիջի կոնկրետիզացիայի ենթարկելու վերաբերյալ հարվածային բրիգադաների կողմից և նրանց կանոնավորումը պրոդուկցիայի վորակի լավացման խնդիրների հետ, ինքնարժեքի իջեցման և աշխատանքի արտադրության բարձրացման վերաբերյալ և այլն:

10. Պարտավորեցնել պրոֆկազմակերպություններին սիստեմատիկ ստուգման և ինքնաստուգման միջոցով ապահովել փոխադարձ պարտավորությունների կատարումը սոցմրցման և հարվածայնության գծով ինչպես գավոդների միջև, ցեխերի, բրիգադաների, նույնպես և պրոֆկազմակերպությունների առանձին օղակների մեջ:

11. Նշելով սուտ հարվածայնության դեմ մղվող պայքարի թուլությունը բոլոր պրոֆկազմակերպությունները մոբիլիզացիայի ենթարկելով ամբողջ պրոլետար հասարակության ուշադրությունը այդ պայքարի շուրջը, պետք է մղեն վճռական և սիստեմատիկ կռիվ դրանց դեմ հրապարակելով ամեն սուտ հարվածայնության առանձին փաստ: Այդպիսիներին վճռական դատապարտության ենթարկելու նպատակով ուժեղացնել ընկերական արտադրական դատեր կազմակերպելու աշխատանքը, միաժամանակ թույլ չը տալով սուտ հարվածայնության դեմ կռվելու այնպիսի մեթոդ, ինչպիսին է բրիգադաների մեքանիկական ար-

ձակումը (Բաթումի կաշվե գործ), ագուլ չխտակազտումները հարվածայինների շարքերում (Ալավերդու պղնձահանքերում) և այլն: Ա/կ պրոպխորհուրդը պետք է շտապեցնի հարվածայինների քարտերի բաժանումը:

12. Անդրկովկասի մի շարք հիմնարկներում հայտնաբերելով աշխատանքի դիսցիպլինայի ընկնումը, վորի հետևանքով առաջ են գալիս լուրջ ճեղքվածներ, բոլոր պրոֆմիությունները պետք է մշակեն միջոցառումներ առանձին հիմնարկություններում աշխատանքի դիսցիպլինան բարձրացնելու նպատակով:

13. Հարվածայինների գավողների յուանկյունների կողմից թույլատրվող կոպիտ ապավազումների դեպքեր յերևան հանվելու պատճառով—աշխատանքի որվա յերկարացում, (Լենտեխստիլ), տուգանումներ, արձակման որերի շահագործում և այլն: Պրոֆմիությունները աշխատանքի սոցիալիստական ձևի մատչելի դարձնելու և մասսայական բացատրությունների միջոցով պետք է հիմնովին վերացնեն այդ փաստերը:

14. Հայտնաբերելով ԻՏՌ թույլ աշխատանքը և մասնակցությունը սոցմրցակցության և հարվածայնության գործում, պրոֆմիությունները և ինժ. տեխ. աշխատավորները պետք է ապահովեն ՀԱՄԿԽ այդ աշխատանքներն ուժեղացնելու մասին հրապարակված դիրեկտիվի կատարումը:

15 Պրոֆկազմակերպությունները պետք է ապահովեն ակումբների, կրուժոկների և նման կրթական հիմնարկների ակտիվ մասնակցությունը աշխատանքի սոցիալիստական ձևի օգտագործման գործում:

Ցերկրային, հանրապետային, շրջանային և մյուս լրագրության միջոցով սիստեմատիկ կերպով լուսաբանել սոցմրցման և հարվածայնության խնդիրները



ցուցադրելով առանձին հարվածային բրիգադաների և հարվածայինների լավագույն աշխատանքները, վորոնք կատարած և գերակատարած լինեն արդֆինպլանը, լրագրության միջոցով ծավալել վճռական պայքար սոցմրցման և հարվածայնության մեջ նկատվող աղավաղումների դեմ:

16. Պետակ. և կոոպերատիվ կազմակերպություններում աշխատողների մեջ սոցմրցումն ու հարվածայնությունն ուժեղացնելու նպատակով այլ և լուսավորության, բժշկա-սանիտար. և արվեստի աշխատողների մեջ, Ցերկրային և Հանրապետային պրոֆ պատշած միությունները պետք է վերաքննեն տարվող աշխատանքների մեթոդները սոցմրցման ու հարվածայնության գծով և կոնկրետացնեն վճռական պայքար մղելով աշխատանքի սոցիալիստական ձևերի թերագնահատության դեմ այդ աշխատավորների մեջ—առևտրա-կոոպերատիվ պրոֆմիությունը այդ հիմնարկներում աշխատողների մեջ հարվածայնությունն ու սոցմրցումը զարգացնելու մասին պետք է մշակե հետագայում ծավալելու և ամրացնող միջոցառումներ, մանավանդ գործակատարների մեջ պետք է անել այդ մաքսիմալ ուշադրություն դարձնելով առևտրա կետերում տարվող աշխատանքների վրա, նրանցում գտնվող ապրանքների կանոնավոր պահվելու վրա՝ պայքար մղելով կորստի և փչանալու դեմ: Ուժեղացնել և լայնացնել սոցմրցումն ու հարվածայնությունը փակ կոոպերատիվներում, ճաշարաններում բանվորության մթերումը լավացնելու հակումով:

17. Խոշորագույն նշանակություն տալով սոցմրցմանն ու հարվածայնությանը կարմիր բանակայինների և բանվորության միջև, բոլոր պրոֆկազմա-

կերպությունները պետք է ուժեղացնեն այդ գծով իրենց աշխատանքները, ստեղծեն մշտական կապ, յենթարկեն իրենց վրա վերցրած պարտականությունները սիստեմատիկ ստուգման ու կոնտրոլի. մոբիլիզացիայի յենթարկել բանվորական լայն մասսայի և կարմիր բանակայինների ուշադրությունը կարմիր բանակի ռազմաընդունակությունն ամրացնելու խնդիրների, զինվորական մասերում ուսման պլանային գծով կատարելու և ֆաբրզործարանների աշխատանքների վրա, յերկրի պաշտպան ընդունակություն ամրացնելու և ռազմապրապագանդ մղելու գործում։

18. Հնգամյակի յերրորդ վճռական տարին պահանջում է սոցմրցման և հարվածայնության նոր վերելք։

Կուսկենտկոմի 31 թ. մարտի 15-ի վորոշումն իրագործելու հիման վրա բոլոր կոմունիստներին և կոմյերիտականներին կարճ ժամանակի ընթացքում հարվածայնության և սոցմրցակցության ներգրավելու վերաբերյալ, ԱԿՎՀ ապրիլի 27-ի վորոշման իրագործումը, ՀԱՄԿԽ և Ցերիտկոմների ԿԿ դիմումները պետք է հասցնել բարձրագույն աստիճանի, վորպես հարվածային շարժում Անդրկովկասում։

Ա/կ հարվածայինների I ժողովը նշում է, վոր ԼԿՅԵՄ ԿԿ-ի դիմումը՝ ուղղված բոլոր կոմյերիտականներին, յերիտասարդ հարվածայիններին և բոլոր աշխատավոր յերիտական կազմակերպություններին կոմյերիտական հանդիպական պլան կազմակերպելու վերաբերյալ. բանվորական ուչաստկայից ու դազգյահից սկսած մինչև տնտեսական միացումները պետք է գտնի իր իրագործումը յերիտասարդ հարվածայինների, այլ և ամբողջ Անդրկովկասյան հարվածայնության մեջ։



Կոմյերիտական հանդիպականը պետք է դառնա ամեն մի հարվածայինի, ամեն մի բանվորի հանդիպական պլանը։

19. Հնգամյակի III տարին պահանջում է բանվոր դասակարգի և յերկրի աշխատավորության հատուկ ուշադրությունը դեպի սոցիալիստական կառուցման վճռական ուչաստկաները—վառելիքը, մետաղը և տրանսպորտը։

Հարվածայինների Ա/կ I ժողովը առանձնապես նշում է հարվածայինների և բոլոր բանվորների հարվածային խնդիրները, վորոնք գոյություն ունեցող ճեղքերի շուտափույթ վերացումով կատարում և գերակատարում են արդֆինպլանները։

Մասնավորապես Ա/կ ժողովը պարտավորեցնում է հնգամյակը $2^1/_2$ տարում կատարող նեֆթի հարվածայիններին պղինձ, ածուխ, անդեզիտ, տրանսպորտ, հավաքել բոլոր ույժերը յեղած ճեղքերը վերացնելու։

20. Ամրացնելով Ա/կ ֆեդերացիայի զորեղ տընտեսությունը, ուժեղացնելով յերկրի պաշտպանողական ընդունակությունը ամրապնդելով աշխատող մասսայի ինտերնացիոնալ դաստիարակությունը, սոցմրցակցությունն ու հարվածայնությունը հասցնելով բարձրագույն աստիճանի, Ա/կ բանվոր դասակարգը, Խորհրդային միության պրոլետարական ատրյադներից մեկը, կուսակցության գեներալ գծի պաշտպանության համար աջ ոպորտունիստների վորպես գլխավոր վտանգի դեմ մղվող պայքարի հիման վրա նոր հաղթությունով սոցմրցման և հարվածայնության III տարում կը գա սոցիալիստական հաղթական կառուցման գործում կը կատարի հնգամյակը չորս տարում։

## Ա/Կ ՀԱՐՎԱԾԱՅԻՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՎԱՔԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ ՆԱՎԹԱՅԻՆ ՀՆԳԱՄՅԱԿԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՍՏ ԱԶՆԵՎԹԻ ԶԵԿՈՒՅՄԱՆ.

Լսելով ընկ. Բարինովի զեկուցումը նավթային հնգամյակը կատարելու վերաբերյալ Ա/Կ I հարվածայինների ժողովը նշում է, որ Բաքվի նեվթյանիկները կոմկուսակցության ղեկավարությամբ, աշխատանքային բարձրագույն էնտուզիազմի և հարվածայնության ու սոցմրցակցության ծավալման հիման վրա, հակառակ հակահեղափոխական վնասարար ինտերվենտների տարած քայքայիչ աշխատանքների, $2^1/_2$ տարվա ընթացքում կատարելով նավթային հնգամյակը տարված է խոշորագույն հաղթանակ։ Այդ հաղթանակը ավելորդ անգամ հաստատում է կուսակցության գեներալային գծի ուղիղ լինելը։ Ջարդում է աջ և «ձախ» օպորտունիստների և բուրժուա էկոնոմիստների մարգարեությունները վերցրած տեմպերի ուժից վեր լինելու վերաբերյալ։ Երկրի ինդուստրիալիզացիայի և գյուղատնտեսության սոցիալիստական ռեկոնստրուկցիայի վառ տեմպերը առաջ են մղում խոշոր շարունակ մեծացող պահանջներ դեպի նավթային արդյունաբերությունը և Բաքվա Ազնեվթի բանվորության առաջ հարց են դնում 31 թ. ձեռք բերել 15.337.000 տոնն նեվթ ու գազ, փորել 663.000 մետր և մշակել 11.970,000 տոնն նեվթ։



Բաքվի նավթայիննիկների ունեցած խոշոր հաղթանակների հետ միասին, ժողովը 31 թ. I կվարտալի արդֆինպլանի կատարման գործում հայտնաբերում է ճեղքված առանձնապես փորելու գծով, որ պետք է համարել ուղղակի հետևանք այն բանի, որ թույլ է յեղել Ազնեվթի նավթայիննիկների միության կողմից դարձված ուշադրությունը։ այլ և այն բանի, որ բանվորության ակտիվությունն ու ուշադրությունը բավարար չափով մոբիլիզացիա չի յեղել արված պլանային խնդիրները կատարելու համար կռիվ մղելու գործում։ 31 թ. պլանային խնդիրների աջող իրագործման և Բաքվի նավթայիննիկների խորհրդային ամբողջ յերկրի առաջ վերցրած պարտականությունը կատարելու նպատակով Ա/Կ հարվածայինների I ժողովն անհրաժեշտ է համարում—

1. 31 թ. արդյունաբերական խնդիրների աջող կատարման և գերակատարման համար կռիվ մղելու և հակահեղափոխական վնասարարների գործունեության հետևանքները վերացնելու մաքրով, Ազնեվթը և նավթայիննիկների պրոֆմիությունը պետք է մոբիլիզացիա անեն նավթային բանվոր լայն մասսայի և ինժեներ-տեխնիկներ կողմի ուշադրությունը, աշխատելով ձեռք բերել աշխատանքային էնտուզիազմի նոր հոսանքներ, հարվածայնության և սոցմրցակցության հետագա ծավալում և աշխատանքի սոցիալիստական ձևերի մաքսիմալ տարածումը փորողների և նավթ մշակողների գծով։ Ապահովել աքտիվ մասսայի արտադրական կոնկրետ, իսկական ղեկավարությունը, գործի գլուխ անցկացնել նավթայինիկ բանվորության աշխատանքային էնտուզիազմը, մշակել և իրագործել միջոցառումներ, վորպեսզի բանվորը ծանոթ լինի արտա-

դրության տեխնիկայի հետ, աշխատելով կարճ ժամանակում իրագործել ՀԱՄԿԽ V պլենումի որոշումները մասնագետ բանվորներ պատրաստելու վերաբերյալ։

2. Ադնեվթի որոշ ողակներում նկատելով անհրաժեշտ պլանայինության բացակայություն, տեղերի և պլանային օրգանների հետ կապի թուլություն, այլ և զանազան ճյուղերում պլանի անբավարար մըտցում, ժողովը գտնում է, որ Ադնեվթը հետագայում բոլոր ողակներում էլ պետք է ամրացնե պլանայնությունը, պլանային օրգանների աշխատանքների լավացում համապատասխան—պլանայնագետ աշխատավորների հավաքումով. միաժամանակ ժողովը լուրջ նշակություն է տալի բանվորների լայն մասսայի մասնակցությանը արդֆինպլաններ մշակելու և հանդիպական պլաններ կազմելու գործում յուրաքանչյուր արտադրական և առանձին բանվորների տեղերում։

3. Ադնեվթի մի շարք հիմնարկներում (մանավանդ նավթափոր. մասում) I կվարտ. նկատված ճեղքերը վերացնելու մտքով ժողովը Ադնեվթի ղեկավար մասի և նեվթային պրոֆմիության առաջ դնում է կարևորագույն խնդիր բոլոր ցուցանիշների կատարման համար պայքարելու վերաբերյալ, առանձնապես վորակականների գծով, թեթև նավթի խնդիրների գերակատարում—բրեզենտի արտադրության կոեֆֆիցենտի բարձրացումով, արագացնել փորվացքի թափը լրիվին օգտագործելով գոյություն ունեցող սարքավորումը։ Դարձնել հատուկ ուշադրություն ինքնարժեքի իջեցման և աշխատանքի արտադրության բարձրացման վրա աշխատանքի դիսցիպլինայի ուժեղացման միջոցով։

4. Ժողովը ևակոն նշանակություն տալով փորվածքի գործի էֆեկտությանը, պարտավորեցնում է



Ադնեվթին դարձնել առանձին ուշադրություն հորերի մաքսիմալ օգտագործմանը, կանոնավոր էլ գազային տնտեսությանը։

5. Նավթանյութերի մշակման հետագա ծրագրի լայնացման մտքով հանձնարարել Ադնեվթին Բագվում և Բաթումում ուժեղացնել նոր կրեկինգ-զավոդների գործը և ապահովել ժամանակին նրանց բացումը։ Աշխատել շինարարողական գործի մաքսիմալ պլանավորում, լայն չափով գործադրելով ստանդարտիզացիան և տիպիզացիան շինարարության մեջ, այլ և ժամանակին օգտագործել դրանց նախագծերն ու նախահաշիվները։

6. Ժողովը նկատելով շինարարական և տեխնիքական նյութերի թույլ մատակարարում, վորը ամբողջ Ադնեվթի աշխատանքը դնում է ճեղքի վտանգի տակ, հանձնարարում է Ադնեվթին պարտավորեցնել նյութեր մատակարարող բոլոր հիմնարկություններին այն մտքով, որ նրանք Ադնեվթին նյութեր մատակարարեն առանց ընդհատումների. միաժամանակ ժողովն անհրաժեշտ է համարում բանվորական կոնտրոլի ուժեղացումը պատվերները ժամանակին կատարելու գործի վրա կոնկրետիզացիայի յենթարկելով պատվերը կատարելու ժամանակը ամեն անգամ հրապարակ հանելով մատակարարման գործում ճեղք առաջ բերելու մեջ մեղադրվողներին։

7. Ժողովը անբավարար է համարում ռացիոնալիզատորական միջոցառումները և փարզավերի հնարումների իրագործումը։ Հնարողների և հարվածայինների առաջարկները մաքսիմալ կերպով օգտագործելու նպատակով ժողովը հանձնարարարում է Ադնեվթին սահմանել սաստիկ պատասխանատվություն բան-

վորների առաջարկներն ու հնարարումները աչքաթող անողների համար։ Բացի այդ աշխատանքի սոցիալիստական նոր ձևերի ուժեղացման և արտադրական եֆֆեկտավորության ուղիղ հաշվառման նպատակով, կանոնավորել հաշվառումը և ծավալել Ազնեվթի հիմնարկների բոլոր ողակներում ունեցված արտադրական փորձառությունների փոխանակում։

8. Ժողովը խոշոր նշանակություն տալով խորհրդային և օտար տեխնիկային տիրապետելու գործին այլ և բանվոր լայն մասսայի մեջ տարածվելուն, հանձնարարում է Ազնեվթին նավթայինների միության հետ միասին պրոմխալաներում և հիմնարկություններում ծավալել դպրոցական ցանցը և ապահովել տեխնիքական գիտության տարածումը մաքսիմալ չափով ներգրավելով ինժեներ-տեխնիկ աշխատավորներ վորպես խմբակների ղեկավարներ։

9. Ժողովը կադրեր պատրաստելու գործում հայտնաբերելով մի շարք թերություններ, անհրաժեշտ է համարում ուժեղացնել Ազնեվթի ուշադրությունը կադրեր պատրաստելու, նոր կադրերի մեջ տարվող աշխատանքների ուժեղացման, կանանց աշխատանքի ներգրավման, բանվորական առանձին խմբերի պատրաստման և կվալիֆիկացիան բարձրացնելու մտքով առաջարկված միջոցառումներն իրագործելու համար։

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос Библиотека ՀՍՍՌ Арм. ССР им. А Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ



ՀՀ Ազգային գրադարան
NL0202441

ԳԻՆՆ Է 12 ԿՈՊ

22.214
555
330.391
Ա-57